

1.4.2. Աշխատանքի վարձատրություն

2018 թվականի հունվարից սկսած ՀՀ միջին աշխատավարձի ցուցանիշների տեղեկատվական աղբյուրի փոփոխության (նոր աղբյուրի ներդրման) վերաբերյալ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, հիմնվելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազայի վրա (այսուհետ՝ բազա), **2018թ. հունվարից** անցում է կատարել միջին աշխատավարձի հաշվարկման **տեղեկատվական նոր աղբյուրի՝ վարչական ռեգիստրի գործիքի** կիրառմանը¹:

ՀՀ ՊԵԿ վարչական ռեգիստրի ներդրման արդյունքում ապահովվել է ամսական կտրվածքով վիճակագրական միավորների ամբողջական ընդգրկվածություն՝ ներառելով **մեկ և ավելի վարձու աշխատող** ունեցող բոլոր կազմակերպություններին՝ կազմակերպաիրավական ձևից անկախ: Ըստ այդմ, միջին ամսական աշխատավարձի ստորև ներկայացվող ցուցանիշները հաշվարկվել են մոտ 37 հազ. կազմակերպությունների ավելի քան 500 հազ. վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության տվյալների հիման վրա: Մինչ տեղեկատվական աղբյուրի սույն փոփոխությունը, ցուցանիշները հաշվարկվում էին **ամսական** վիճակագրական մշտադիտարկմամբ ընդգրկված մոտ 4 500 խոշոր և միջին² կազմակերպությունների շուրջ 370 հազ. վարձու աշխատողների նույնանուն տվյալների հիման վրա:

Տեղեկատվության աղբյուրի փոփոխության հետևանքով կազմակերպությունների ծածկույթի շեշտակի աճով և կառուցվածքային փոփոխությամբ³ պայմանավորված, օբյեկտիվորեն առաջացել է միջին աշխատավարձի ցուցանիշի ժամանակագրական շարքերի որոշակի խզում⁴, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան ցուցանիշները նախորդ տարիների հետ համեմատելիս:

Այստեղ և հետայսու՝ ՀՀ ՊԵԿ տվյալների բազայի հիման վրա ստացված 2018թ. միջին աշխատավարձի ցուցանիշները կհրապարակվեն 2017թ.-ի համապատասխան ցուցանիշների հետ համեմատությամբ՝ **հաշվարկված ՀՀ ՊԵԿ 2017թ. համանուն տվյալների բազայից:**

Տեղեկատվական նոր աղբյուրի, վիճակագրական նոր գործիքակազմի ներդրման գործընթացով պայմանավորված ևս, հրապարակվող վիճակագրական տեղեկատվությունը կամ դրա առանձին հատվածները հաջորդիվ կարող են ճշգրտվել:

Աշխատանքի գնի, այդ թվում նաև աշխատավարձի կառուցվածքի ցուցանիշները **կշարունակվեն հավաքագրվել և հրապարակվել տարեկան պարբերականությամբ:**

¹ Հիմքը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2017թ.-ի 1582-Ն որոշումը:

² Մինչ 2018թ.-ն աշխատավարձի վիճակագրության ոլորտում ամսական ցուցանիշի հաշվարկման համար հաշվետու կազմակերպությունների շրջանակն առանց փոքր և գերփոքր կազմակերպությունների ձևավորելու նպատակով կիրառվել են կազմակերպությունների չափի դասակարգման այլ չափորոշիչներ: Համաձայն դրանց կազմակերպության չափը որոշվել էր ոչ միայն աշխատողների թվաքանակով, այլ նաև կազմակերպության գործունեության տեսակով: Օրինակ, արդյունաբերության ոլորտում խոշոր են համարվել 100 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունները, շինարարության ոլորտում՝ 50 և ավելին, առևտրի ոլորտում՝ 30 և ավելի աշխատող ունեցողները: 2018թ.-ից սկսած՝ տե՛ս 60-րդ էջի ծանոթագրությունը:


³ Համատարած ընդգրկվածություն, պետական և ոչ պետական հատվածների համամասնության փոփոխություն, ամբողջ համակցության մեջ փոքր և գերփոքր կազմակերպությունների քանակի 79 % մասնաբաժին և այլն:

⁴ **Նախկին ամսական ցուցանիշների** հետ առավել համադրելի են ՀՀ ՊԵԿ տվյալների բազայի **50 և ավելի (50 >)** աշխատող ունեցող կազմակերպությունների միջին աշխատավարձի ցուցանիշները (հաշվի առնելով, որ նախկին տվյալների բազայում մինչև 50 աշխատող ունեցող կազմակերպությունների ընդգրկվածությունը համեմատաբար փոքր էր), իսկ **նախկին տարեկան ցուցանիշների** հետ՝ **1 և ավելի** աշխատող ունեցող կազմակերպությունների միջին աշխատավարձի ցուցանիշները:

Աշխատողների թվաքանակը և միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ կազմակերպությունների չափի¹ և տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների, 2018թ. հունվար

	Կազմակերպությունների թիվը	Ընդամենի նկատմամբ, %	Աշխատողների թվաքանակը, մարդ	Ընդամենի նկատմամբ, %	Աշխատողների միջին թվաքանակը, մարդ	Միջին ամսական աշխատավարձը, դրամ
Ընդամենը						
Ընդամենը	36 493	100	509 549	100	14.0	168 152
1- 9 աշխատող	28 749	78.8	76 695	15.1	2.7	98 705
10 - 49 աշխատող	6 025	16.5	128 468	25.2	21.3	130 762
50 - 249 աշխատող	1 497	4.1	137 092	26.9	91.6	165 638
250 > աշխատող	222	0.6	167 294	32.8	753.6	223 445
Պետական						
Ընդամենը	4 090	100	198 200	100	48.5	149 417
1- 9 աշխատող	771	18.9	4 325	2.2	5.6	99 030
10 - 49 աշխատող	2 411	58.9	60 783	30.7	25.2	100 179
50 - 249 աշխատող	819	20.0	70 072	35.4	85.6	126 434
250 > աշխատող	89	2.2	63 020	31.8	708.1	206 045
Ոչ պետական						
Ընդամենը	32 403	100	311 349	100	9.6	181 409
1- 9 աշխատող	27 978	86.3	72 370	23.2	2.6	98 686
10 - 49 աշխատող	3 614	11.2	67 685	21.7	18.7	158 229
50 - 249 աշխատող	678	2.1	67 020	21.5	98.8	206 627
250 > աշխատող	133	0.4	104 274	33.5	784.0	237 650

Աշխատողների թվաքանակն ըստ կազմակերպությունների չափի և տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների, 2018թ. հունվար




¹ Այստեղ և հետայսու՝ կազմակերպությունների չափի սույն դասակարգման հիմքում ընկած է ԵՄ «Աշխատանքի գնի և վատակալի կառուցվածքային վիճակագրության որակի գնահատման մասին Խորհրդի թիվ 530/1999 (ԵՀ) կանոնակարգը կիրարկելու վերաբերյալ» 2006թ. մայիսի 5-ի Հանձնաժողովի թիվ 698/2006 (ԵՀ) կանոնակարգը: Ի լրումն վերոնշյալ կանոնակարգով նախատեսված դասակարգման, 1-9 աշխատող ունեցող կազմակերպությունները պայմանականորեն համարվել են գերփոքր, 10-49-ը՝ փոքր, 50-249-ը՝ միջին և 250 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունները՝ խոշոր անկախ գործունեության տեսակից:

Միջին ամսական անվանական աշխատավարձն¹ ըստ կազմակերպությունների չափի, տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների և աշխատողների սեռի, 2018թ. հունվար (ներառված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալները)


դրամ

	Ընդամենը*	Պետական	Ոչ պետական	1- 9 աշխատող	10 - 49 աշխատող	50 > ** աշխատող
Ընդամենը	168 152	149 417	181 409	98 705	130 762	199 172
Տղամարդ	201 517	167 073	211 795	109 097	159 473	241 577
Կին	132 230	119 231	141 463	89 104	110 264	152 962

Միջին աշխատավարձն ըստ աշխատողների սեռի և կազմակերպության չափի



Միջին աշխատավարձն ըստ աշխատողների սեռի և տնտեսության հատվածների



* Տեղեկատվության նոր աղբյուրի պայմաններում սույն ցուցանիշն ամսական կտրվածքով առավել ամբողջական է և առավել համադրելի է նախկին ժամանակագրական շարքերի միայն ՏԱՐԵԿԱՆ ցուցանիշների հետ, որոնցում արտացոլված էին տարեկան մեկ անգամ հավաքագրվող փոքր և զերփոքր կազմակերպությունների տվյալները, ինչը տեղեկատվության նախկին աղբյուրի պայմաններում հնարավորինս ամբողջացնում էր միջին աշխատավարձի ցուցանիշը (տե՛ս 59-րդ էջի 4-րդ ծանոթագրությունը):

** Տեղեկատվության նոր աղբյուրի պայմաններում սույն ցուցանիշն առավել համադրելի է նախկին ժամանակագրական շարքերի միայն ԱՄՍԱԿԱՆ ցուցանիշների հետ, որոնցում արտացոլված էին ամսական պարբերականությամբ հավաքագրվող խոշոր և միջին կազմակերպությունների միջին աշխատավարձի ցուցանիշները (տե՛ս 59-րդ էջի 4-րդ ծանոթագրությունը):

¹ Այստեղ և հետայսու՝ միջին աշխատավարձի ցուցանիշում ներառված է նաև այլ կազմակերպություններից արտաքին համատեղությամբ աշխատողների աշխատանքի վարձատրությունը:

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության ինստիտուցիոնալ
Հատվածների, 2018թ. ամիսներով


	1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններ			50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններ		
	դրամ					
	ընդամենը	պետական	ոչ պետական	ընդամենը	պետական	ոչ պետական
Հունվար	168 152	149 417	181 409	199 172	170 099	225 512
Փետրվար ¹	171 029	149 749	185 668	204 554	170 828	234 260
Հունվար - փետրվար ¹	169 609	149 583	183 578	201 896	170 467	229 969
	%, 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ					
Հունվար	105.0	103.6	105.2	106.0	104.8	105.8
Փետրվար ¹	106.7	101.9	108.8	108.4	102.5	111.2
Հունվար - փետրվար ¹	105.8	102.7	107.0	107.2	103.6	108.5

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ արտարժույթի տեսակների՝
ՀՀ ԿԲ փոխարժեքով, 2018թ.

(ներառված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալները)

	1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններ			50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններ		
	դրամ					
	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ րուբլի	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Հունվար	349	285	19 690	413	338	23 322
Փետրվար ¹	355	288	20 192	425	344	24 150
Հունվար - փետրվար ¹	352	286	19 942	413	336	23 418
	%, 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ					
Հունվար	105.6	92.1	99.5	106.7	93.0	100.6
Փետրվար ¹	107.7	92.7	105.0	109.5	94.2	106.7
Հունվար - փետրվար ¹	106.8	92.5	100.8	106.7	92.5	102.2

Միջին ամսական անվանական աշխատավարձի փոփոխությունն ըստ արտարժույթի տեսակների




¹ Նախնական:

**Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների
և տնտեսական գործունեության տեսակների, 2018թ. հունվար**
(ներառված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալները)

ՏՎՏԻ (խմբ.)		Ընդամենը, դրամ	Պետա- կան	Ոչ պետա- կան	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %		
					ընդամենը	պետական	ոչ պետական
A-S	Ընդամենը	168 152	149 417	181 409	105.0	103.6	105.2
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	117 334	114 317	118 640	99.9	100.9	99.5
B	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	428 503	-	428 503	120.2	-	120.2
C	Մշակող արդյունաբերություն	153 281	-	153 281	103.0	-	103.0
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	229 200	311 586	221 381	99.3	98.8	99.3
E	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	160 233	102 347	181 428	108.8	100.1	113.4
F	Շինարարություն	176 878	163 125	177 062	108.9	81.6	109.8
G	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	124 955	-	124 955	102.8	-	102.8
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	171 225	186 187	160 338	112.3	119.1	107.3
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	107 042	-	107 042	100.4	-	100.4
J	Տեղեկատվություն և կապ	381 397	183 922	398 859	108.4	106.1	107.9
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	335 039	409 814	331 650	106.4	103.1	106.8
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	123 300	110 298	125 345	102.7	103.4	102.5
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	186 182	172 761	195 784	103.6	104.0	102.7
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	128 028	116 112	130 281	103.0	101.8	103.3
O	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	217 960	217 960	-	108.6	108.6	-
P	Կրթություն	114 140	110 314	171 646	100.7	99.8	108.1
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	140 372	135 242	147 758	103.8	99.6	109.8
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	115 479	102 688	134 334	104.1	97.3	112.1
S	Սպասարկման այլ ծառայություններ	122 742	103 831	123 177	100.9	95.0	100.9

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսական գործունեության տեսակների



Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների, 2018թ. հունվար

(ներառված են 50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալները)

ՏՊՏ (սաբ.2)	Ընդամենը, դրամ	Պետական	Ոչ պետական	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %		
				ընդամենը	պետական	ոչ պետական
A-S	199 172	170 099	225 512	106.0	104.8	105.8
A	124 139	114 338	131 672	102.9	101.3	103.5
B	453 393	-	453 393	120.5	-	120.5
C	181 700	-	181 700	102.7	-	102.7
D	240 816	312 218	233 150	99.2	98.8	99.1
E	169 955	101 602	186 164	108.4	103.3	112.8
F	213 675	165 340	214 911	114.2	107.4	113.7
G	148 533	-	148 533	100.6	-	100.6
H	200 279	186 423	221 675	114.5	119.2	106.1
I	145 251	-	145 251	102.8	-	102.8
J	440 913	177 356	474 013	111.1	107.7	110.6
K	346 327	413 632	342 977	106.3	104.7	106.6
L	146 073	116 204	170 583	100.5	103.2	96.5
M	189 070	170 703	229 895	104.2	103.7	102.6
N	131 327	123 747	133 187	105.1	103.0	105.6
O	232 009	232 009	-	107.5	107.5	-
P	131 445	125 536	217 047	101.8	101.0	107.6
Q	149 173	138 415	168 272	104.8	99.9	112.2
R	127 530	112 806	146 262	106.3	97.1	116.8
S	116 959	86 691	115 712	97.1	98.3	97.0

Միջին ամսական անվանական աշխատավարձը սոցիալական ոլորտում, 2008թ.¹
(ներառված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալները)


	1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններ			50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններ		
	2017թ.	2018թ.	Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %	2017թ.	2018թ.	Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	119 320	120 991	101.4	133 641	137 309	102.7

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ կազմակերպությունների չափի և աշխատողների տարիքային խմբերի, 2018թ. հունվար
(ներառված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալները)

դրամ

	Ընդամենը	ըստ տարիքի		
		15-29 (երիտասարդներ)	30 - 62	63 >
Ընդամենը	168 152	149 876	173 712	142 736
1- 9 աշխատող	98 705	94 442	101 389	93 496
10 - 49 աշխատող	130 762	129 416	135 782	114 839
50 > աշխատող	199 172	173 209	208 685	163 533

Միջին աշխատավարձն ըստ աշխատողների տարիքային խմբերի և կազմակերպության չափի



Միջին ամսական անվանական և զուտ աշխատավարձերն ըստ կազմակերպությունների չափի, 2018թ. հունվար
(ներառված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալները)

դրամ

	Անվանական աշխատավարձ	Զուտ աշխատավարձ՝ առանց եկամտային հարկի	Զուտ աշխատավարձ՝ առանց եկամտային հարկի և սոցիալական վճարի
Ընդամենը	168 152	114 805	112 197
1- 9 աշխատող	98 705	68 568	67 086
10 - 49 աշխատող	130 762	98 140	96 062
50 > աշխատող	199 172	133 525	130 409

¹ Ներառված են առողջապահության, կրթության, մշակույթի և արվեստի ոլորտները: